

նար, չէ թէ Հասուն մը, այլ եթէ ուրիշ քանի մը Հասուններ և քան զՀասուն՝ Հասուններ ջանահար ըլլան լատինացունելու: — Այո՛, կարելի է պահ մը դիւթել ու անզգայեցնել հայերը, բայց ահա՛ այսպէս՝ իբրև Փիւնիկ հաւ՝ կելնեն կլիրակնդանանան՝ իրաւանց պաշտելի դրօշակը իրենց առաջնորդ ունենալով, որուն առջև պատկառանք ծուներ կղենն ամեն արդարասէր անձինք և ամեն արդարասէր կառավարութիւնք:

Այն իշխանութիւնը, որուն հիմունքը բռնակալութեան վրայ դրուած են, ո՛ւշ կամ կանուխ պիտի կործանի: Իշխանութիւն մը, մանաւանդ կրօնական իշխանութիւն մը, որ աստուածամարտ անսխալականութեան վարդապետութեան մը վրայ հիմնուած է, իբրև աւագի վրայ է այն, անշուշտ հիմն ՚ի վեր պիտի ըլլայ և հետքն անգամ չպիտի մնայ: Այսպէս պիտի ըլլայ Վատիկան, եթէ ՚ի հիմանց չնորոգուի: Ի զո՛ւր կաշխատի Հասուն. ահա՛ իւր բոլոր աշխատութիւնները և յոյսերը յօրս կցնդին: Հայկական արիւնք լատինականին հետ խառնել անկարելի է:

Փոսնջ Թիւ 493

ԿԼԹՈՒԻԿ ԸԶԳԱՅՆՈՅ ՈՐՈՇԱԾ ԸՆԹԱՅՔԸ

Ինչպէս որ մեր ուրբաթ աւուր թուով ծանուցած էինք, կիրակի օրը Վաթիկի ազգայինք Բէրա Լալէ փողոցը Համագրեաց ընկերութեան ընթերցարանը գումարուեցան, 4—500ի չափ անձինք, որոնց մէջ էին նաև Վ.սեմ. Տիրան պէյ Ալքսանեան, Վ.սեմ. Պօղոս Էֆէնտի Անջեան, Վ.սեմ. Յօհաննէս Էֆենտի Սաքրլլեան և ուրիշ շատ երևելի անձինք:

Ժողովին խնդրանքը Տիրան պէյ՝ նախագահ, Սերովբէ Էֆէնտի Աղնաւորեան՝ փոխ — նախագահ և Հէքիմեան Սրապիոն և Յսայեան Թովմաս Էֆէնտիներն ալ՝ առննարպիւրը կարգուելով ատենան բացուեցաւ:

Վ.սեմ. Տիրան պէյ խնդիրն իր ամեն պարագաներով բացատրեց. հասկցուց թէ Հայ Վաթիկութիւնը Արևելեան եկեղեցւոյ աւանդութեանց, ծիսից և արարողութեանց վրայ հաստատուած է: Հետևաբար իրենք Արևելեան — Հայկական Վաթիկի եկեղեցի մը կամ հասարակութիւն մ'են, զլուխ ճանկրով իրենց Հոռոմայ Պապը, և 150 տարիէ՛ի վեր Պապերն ալ զիրենք այսպէս ճանչած և ըն-

դունած են: Բայց Գեր. Հասունեան, երսուն տարիէ ՚ի վեր Արևելեան եկեղեցւոյ կարգերն ու կանոնները փոխոխելով, Վաթիկի Հայոց կրօնական և ազգային իրաւունքները ջնջելու կաշխատի Ասոր համար շատ անգամ Հոռոմի բողոքած են, հանրադրութիւններ զրկած են, բայց լսելի չեն եղած, Հիմա ալ Վաթիկի Հայոց բողոքող մասը Հոռոմն և իրենց կրօնքէն զատուածի տեղ դնելով, բանադրանաց ենթարկելու ելեր է, և կը պահանջէ որ ժողովուրդն իր բոլոր ազգային և կրօնական իրաւունքէն հրաժարի, և երած բռնարարութեանց դէմ լռէ: Բայց այս անհար է, Հայ Վաթիկութիւնը 150 տարիէ ՚ի վեր Հոռոմի հետ ինչ պայմաններով որ կապուած է, այն պայմաններէն մազի չափ խոտորիլ յանձն չեն առնուր: Եւ եթէ Հոռովմ այս անգամ ալ իրենց բողոքն ու խնդիրը չըլտէ, և Գեր. Հասունեանի և անոր կողմնակիցներուն իրաւունք տայ, այն ժամանակ, որովհետև Գեր. Հասուն և իր կուսակիցներն իրենցմէ զատուած կը լլան, կը մնայ իրենց ալ զատ Արևելեան Վաթիկի եկեղեցի մը կազմել, նոյն հիմանց պայմանաց վրայ, որով վաղուց ՚ի վեր ճանչցուած է Հոռովմն: Ասոր համար ալ երևելի անձ մը յատուկ տեղ մը պիտի շնորհէ եկեղեցի մը շինելու համար, որուն պէտք է ամեն մարդ ալ ըստ կարեաց նպաստէ:

Ժողովուրդը միաձայն գոչեցին թէ Գեր. Հասունեանը ոչ աշխարհական և ոչ կրօնական պարիարք կընդունին, և վերոյիշեալ հիմանց և պայմանաց վրայ զատ եկեղեցի մը կազմելու պատրաստեն:

Այս որոշման համեմատ թէ Հոռոմի և թէ Բ. Գրան հետ պէտք եղած բանակցութիւնը ազգին կողմէն կատարելու համար, գաղտնի քուէարկութեամբ 15 անձինք ընտրել առաջարկուելով, ներկայ գտնուողներն իրենց քուէները տուին, և բացակայից համար ալ որոշուեցաւ քուէտուփը ժողովարանին մէջ բաց պահել մինչև յառաջիկայ շաբաթ օրը հաւատարիմ անձանց հսկողութեան ներքև, որպէս զի ամեն մարդ առաւօտեան ժամ երկուքէն միջև իրիկուն քուէին տանին կամ զրկեն:

Այսպէս ահա մեր արգոյ կաթիլի ազգայինք՝ իրենց գատը չոր բողոքներու ապարդիւն շրջանէն հանելով գործնական ընթացքի մը մէջ կը դընեն՝ որով խնդիրն իր լուծմանը հասնելու առաջին քայլն առած ըլլայ:

Աերջիշեալ ժողովին մէջ դաւանութեան գիր մ'ալ կարգացուեցաւ, որպէս զի հասկցուի թէ ժողովուրդն իր կրօնական դաւանութիւնը փոխելու քննա միտք չունի, Սոյն դաւանութեան գիրն ալ ներկայ գտնուողներէն ստորագրուելով՝ Հռովի և Բ. Գրան պիտի ներկայացուի:

Մասիս Թիւ 9/4

ՀԱՅ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻԱՆ ԵՂՐԱՒԻ Ի ԲԵՐԱ

Ինչպէս ազգային մէկ քանի թերթերու միջոցաւ առաջուց ծանուցուած էր, կիւրակէ օրը Բերա Լալէ փողոց թիւ 13 տունը մեծ ըաղմութիւն գումարուելով ազգային ժողով մը տեղի ունեցեր է. ուր ներկայ գտնուեր են նաև երեւելի անձինք. սակայն ըրնաւ կրօնաւոր մը տեսնուած չէ գումարուողներուն մէջ, ժամ 9ին ՚ի ներկայութեան 4—500 Հայ—Հռովմական եղբարց՝ ժողովը և նախապէս հայերէն լեզուաւ ատենախօսութիւն մը տեղի ունեցեր է, յետոյ վիճարանութիւններ եղեր են և իւրաքանչիւր որ հայրենի սիրով վառուած ու բորբոքած սրտովին ուխտեր են Հայ ապրիլ և Հայ մեռնիչ անմիջապէս երկու հանրագրեր ստորագրուիլ սկսան, ասոնց մին բարեխնամ կառավարութեան կ'ուղղուէր յորում Հռովմական—հայ ժողովուրդեան առօսմանն տէրութիւնն ունեցած սէրն ու համարումն յայտնելէն զինի՝ մի ըստ միովէ բացատրուած են նաև ազգայնոց զհասունեան չ'ուզելուն պատճառները:

Իսկ երկրորդ սրբազան Պապին ուղղեալ է, յորում Հռովմական հայ ժողովուրդեան ներկայ վիճակը բացատրուելէն յետոյ՝ մանրամասնաբար կը խօսի Հասունեանի գործած շարիքներուն նկատմամբ և ՚ի վերջոյ աւելցած է նաև, թէ Վաթիկի—Հայ ազգը սրբազան Պապին իրաւասութիւնը կը ճանչէ այնպէս՝ ինչպէս որ ճանչցած է մինչև ցարդ՝ թէ Վաթիկի հայերը երբէք Լատին ըլլալ չ'են ընդունիր և աւելի կ'ընտրեն հայութեամբ մեռնիլ քան օտար ազգի մը յարելով փառաւոր կեանք վարել. թէ մինչև ցարդ պահուած օրէնսդրութիւններուն եթէ սրբազան Պապն հակառակ կենալով ուզէ այլազգ դրութեան վերածել Հայ—կաթոլիկ ժողովուրդը, այն ատեն անոնք ալ պիտի ստիպուին իրենց գլխուն ճարը նայիլ և պատճառն ու բողոք

հետեանքը սրբազան Պապին կամայն ու պահանջողութեանը կը յանձնեն:

Ժողովատեղւոյն անձկութեանը պատճառաւ Սամաթիայէն, Միջագիւղէն և ուրիշ հեռաւոր թաղերէ հարիւրաւոր անձինք նաև ըաղմութիւ Բերա-ցիք չը կրցան ժողովոյն մինչև աւարտումն սպասել, ուստի շատերը միմիայն հանրագիրներու ներքև ստորագրելէ ետք մեկնեցան:

Խօսակցութեան ժամանակ Վեօշեան վեմա՝ Պողոս Էֆէնտի ծանոց թէ ինքը պատրաստ է 10,000 կանգուն գետին և 20,000 լեբա նուիրել որպէս զի յատուկ եկեղեցի մը շինուի եթէ արդէք ըլլայ ժողովուրդեան որ այժմեան եկեղեցիները չ'երթան. դարձեալ վիճարանութեան ծամանակ ապագայ անտեղութիւնները նկատողութեան առնելով որոշուեր է որ եթէ սրբազան Պապը ժողովուրդեան իրաւացի բողոքանաց չ'ըսելով Հասունեանի խորհրդոց համեմատ վարուիլ սկսի, նոյն ատեն ժողովուրդը ալ համախումբ իր ընկերք գիտէ արդէն:

Ժամն ինն ու կէսին ժողովը ցրուեր է, բայց ստորագրուիլ ուզող անձանց դիւրութիւն ըլլալու համար յատկապէս քանի մ'անձինք նոյն ժողովատեղին սպասեր են:

Մինչև յառաջիկայ կիւրակէ առաւօտ ժամ 4 իւրաքանչիւր Հռովմական հայ եղբայր ազատօրէն կրնան ստորագրել: Եւ յս ստորագրութեանց արդիւնքը, մեր ընթերցողաց փոքր ինչ ծանօթացնելու համար սաչափ միայն կրսնիք որ կիւրակէ օրը ժամ 9էն մինչ ժամ 10^{1/2}, 1200 ստորագրութիւն հաւաքուած էր. այս իրողութիւնն ակներև կը ցուցունէ որ մէկ քանի ճիղուիթներու ասդին անդին ըրած բանդագուշանաց համեմատ Հասունի ընդգիմագիրները քանի սինկորներ և աննչան մարդիկ չ'են եղեր, այլ՝ Հայ—հռովմականութեան ամենամեծ մասը. բաց ի Վաղատացիներէն որոց արժանաւոր ածական մը տուած է Պողոս առաքեալ . . . :

Գեր. Հասուն՝ Հռովմայ Պապին մինչև ցարդ գուցէ այնպէս կը հաւատացնէր թէ իրեն հակառակողները մաս մը չ'երեւան ինչպէս զգուցի գաղափարներով տողորուած և հերձուածողութեան միտեալ մարդիկ են, զորս բանադրանք շանթահարել պէտք է. անտարակոյս Ս. Պապն այս հանրագրութիւնը տեսնելու ատեն աւելի իր աչերուն պիտի